Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
շուկայի վերահսկողության տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2022 թվականի նոյեմբերի 26-ի որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՈՒԿԱՅԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հապավումներ 4

2. Ներածություն 5

2.1. ՇՎՏՄ-ի նպատակը 5

2.2. ՇՎՏՄ-ի խնդիրները 5

3. **Կառուցվածք** 6

4. ՇՎՏՄ-ի ընթացիկ տարվա ընթացքում ունեցած ձեռքբերումները 6

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5. ՇՎՏՄ-ի վերահսկողության ոլորտների ընդհանուր վիճակը 9

5.1. Տեխնիկական կանոնակարգման ոլորտ

5.1.1. Տեխնիկական կանոնակարգման ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 12

5.1.2. Տեխնիկական կանոնակարգման ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ 12

5.2. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի ոլորտ

5.2.1. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 13

5.2.2. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ 13

5.3. Չափումների միասնականության ապահովման ոլորտ

5.3.1. Չափումների միասնականության ապահովման ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը 14

5.3.2. Չափումների միասնականության ապահովման ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ 14

5.4. Նյութական պահուստի ոլորտ

5.4.1. Նյութական պահուստի ոլորտում առկա խնդիրները և բացահայտված 15

ռիսկերը

5.4.2. Նյութական պահուստի ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ **15**

5.5. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտ

5.5.1. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը **16**

5.5.2. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ **16**

6. Վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական խնդիրները, դրանց լուծմանն ուղղված գործողությունները **17**

7. Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների իրականացման նկարագրությունը **19**

8. Այլ նյութեր **21**

1. Հապավումներ

ՀՀ -	Հայաստանի Հանրապետություն
ՇՎՏՄ –	**շուկայի վերահսկողության տեսչական մարմին**
Խորհուրդ-	**ՇՎՏՄ-ի կառավարման խորհուրդ**
Ծրագիր -	**ՇՎՏՄ-ի 2023 թվականի տարեկան գործունեության ծրագիր**
ՌԳՎՎ -	**ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն**
ՏԿԹՄՎՎ -	**տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն**
ՉԿՆՎՎ -	**չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն**
ԱԿՎՎ -	**արտադրական կանեփի վերահսկողության իրականացման վարչություն**
ԻԱՓՎ -	**իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն**
ՆԼՓՉ -	**նմուշառման, լաբորատոր փորձաքննությունների և չափումների իրականացման վարչություն**
ԻԽՀՀՏԱԲ -	**իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին**

2. Ներածություն

ՇՎՏՄ-ն գործում է՝ ղեկավարվելով ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 732-Լ որոշման 1-ին կետով հաստատված ՇՎՏՄ-ի կանոնադրությամբ և, համաձայն «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի, հանդիսանում է ՀՀ կառավարությանն ենթակա մարմին:

2.1. ՇՎՏՄ-ի նպատակը

ՇՎՏՄ-ի նպատակն է՝ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող ոչ պարենային արտադրանքների համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին, ստուգաչափման ենթակա չափման միջոցների համապատասխանությունը չափագիտական կանոններին և նորմերին, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի նյութական պահուստի օրենսդրության պահանջների պահպանումը, արտադրական կանեփի նկատմամբ վերահսկողության իրականացման համար լիզենզավորված անձանց գործունեության համապատասխանությունը լիցենզավորման պայմաններին և պահանջներին, խախտումների բացահայտումը, կանխարգելումն ու վերացումը:

2.2. ՇՎՏՄ-ի խնդիրները

ՇՎՏՄ-ի խնդիրներն են ոչ պարենային արտադրանքի անվտանգության, չափումների միասնականության ապահովման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի՝ հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի, նյութական պահուստի, արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքներով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված պայմանների և պահանջների պահպանումը, ինչպես նաև կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

3. Կառուցվածք

ՇՎՏՄ-ի կառուցվածքում ընդգրկվում են ՇՎՏՄ-ի ղեկավարի, ղեկավարի տեղակալի, ղեկավարի օգնականի, ղեկավարի խորհրդականի, ղեկավարի տեղակալի օգնականի պաշտոնները և հետևյալ հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումները.

1) ռիսկի գնահատման և վերլուծությունների վարչություն,
2) տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների և թանկարժեք մետաղների վերահսկողության վարչություն,
3) չափագիտական կանոնների և նորմերի վերահսկողության վարչություն,
4) իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն,
5) արտադրական կանեփի վերահսկողության իրականացման վարչություն,
6) նմուշառման, լաբորատոր փորձաքննությունների և չափումների իրականացման վարչություն,
7) որակի ապահովման վարչություն,
8) իրազեկման, խորհրդատվության և հանրության հետ տարվող աշխատանքների բաժին:

ՇՎՏՄ-ի կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները սահմանված են ՇՎՏՄ-ի ղեկավարի կողմից հաստատված կանոնադրություններով:

ՇՎՏՄ-ն տարածքային ստորաբաժանումներ՝ տարածքային կենտրոններ կամ սահմանային հսկիչ կետեր չունի:

4. ՇՎՏՄ-ի ընթացիկ տարվա ընթացքում ունեցած ձեռքբերումները

ՇՎՏՄ-ն 2022 թվականի ընթացքում արձանագրել է ձեռքբերումներ տեխնիկական կանոնակարգման, թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի, չափումների միասնականության և նյութական պահուստի ոլորտներում: Ստորև՝ ըստ ոլորտների, ներկայացվում են ՇՎՏՄ-ի ձեռքբերումները.

ՇՎՏՄ-ի տեխնիկական կանոնակարգման ոլորտի մասով ունեցած ձեռքբերումներն են.

- 9%-ով նվազել են առանց մակնշման կամ թերի մակնշման դեպքերը՝ 2021 թվականին խախտումներ են հայտնաբերվել 27% տնտեսվարող սուբյեկտի մոտ, իսկ 2022 թվականին՝ 18%:
- Ավտոգազալիցքավորման ճնշակայաններում նվազել է գազի ճնշման սահմանաչափի (մինչև 19,6 ՄՊա) գերազանցման դեպքերը: Մասնավորապես՝ ավտոգազալիցքավորման ճնշակայաններում գազի ճնշման սահմանաչափի գերազանցման դեպքերի տեսակարար կշիռը այս ոլորտում իրականացված ստուգումների քանակի նկատմամբ կազմել է՝ 2021 թվականին 34%, իսկ 2022 թվականին՝ 21%:
- Կտրուկ նվազել են ավտոմոբիլային բենզինի և հեղուկացված ածխաջրածնային գազերի շուկայում անվտանգության ցուցանիշների խախտման դեպքերը: Մասնավորապես՝ ավտոմոբիլային բենզինի անվտանգության ցուցանիշների խախտումների տեսակարար կշիռը ընդհանուր իրականացված փորձաքննությունների մեջ 2021 թվականին կազմել է մոտ 18%, իսկ 2022 թվականին՝ 4%, հեղուկացված ածխաջրածնային գազերի մասով՝ 2021 թվականին կազմել է 78%, իսկ 2022 թվականին՝ 28%:
- Ձեռք է բերվել մարդու կյանքին և առողջությանն առավել վնաս պատճառող ցուցանիշի՝ K-5 դասի վառելիքի ծծմբի տեսակարար կշիռը որոշող լաբորատոր սարք, որի կիրառման արդյունքում ՇՎՏՄ-ն հնարավորություն կստանա նվազեցնել ստուգման տևողությունը, արագ արձագանքել դիմում-բողոքներին, ինչպես նաև խնայել լաբորատոր փորձաքննության համար հատկացված ֆինանսական միջոցները: Ներկայումս նավթամթերքի լաբորատորիայի հավատարմագրման աշխատանքներն ավարտական փուլում են:
- 2021 թվականի ընթացքում տեխնիկական կանոնակարգի պահանջների (համապատասխանության գնահատում/մակնշում) հարցով ՇՎՏՄ-ին հասցեագրված գրավոր դիմումների թիվը 6 է, իսկ 2022թ. տասն ամսիների ընթացքում այդ հարցով ստացվել է ընդամենը 1 դիմում-բողոք:

ՇՎՏՄ-ի թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի ոլորտում ունեցած ձեռքբերումներն են՝

- գնվել է ոսկու անալիզատոր, որի կիրառման միջոցով հնարավոր կլինի պարզել թանկարժեք մետաղների հարգը: Հարգորոշման արդյունքում ՇՎՏՄ-ն հնարավորություն կստանա արգելել թանկարժեք մետաղից պատրաստված իրերի վրա դրոշմված հարգին չհամապատասխանող իրերի վաճառքը՝ պաշտպանելով սպառողների իրավունքները և օրինական շահերը: Ներկայումս թանկարժեք մետաղների լաբորատորիայի հավատարմագրման աշխատանքներն ավարտական փուլում են:

ՇՎՏՄ-ի չափումների միասնականության ապահովման ոլորտում ունեցած ձեռքբերումներն են՝

- էականորեն նվազել են ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի, ինչպես նաև հեղուկացված ածխաջրածնային գազերի լցակայաններում չափագիտական կանոնների և նորմերի խախտման դեպքերը: Մասնավորապես՝ ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի լցակայաններում խախտումների տեսակարար կշիռը այս ոլորտում իրականացված ստուգումների քանակի նկատմամբ կազմել է 2021 թվականին 51%, իսկ 2022 թվականին՝ 34%, հեղուկացված ածխաջրածնային գազերի լցակայանների մասով՝ 2021 թվականին՝ 82%, իսկ 2022 թվականին՝ 61%:
- 2021 թվականի ընթացքում ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի, ինչպես նաև հեղուկացված ածխաջրածնային գազերի լցակայաններում թերլիցքավորման խնդրով ՇՎՏՄ-ին է հասցեագրվել 31 գրավոր դիմում-բողոք, իսկ 2022 թվականի տասը ամիսների ընթացքում այդ թիվը կազմել է ընդամենը 9:
- ՇՎՏՄ-ի առաջարկով՝ 2021 թվականի մայիսի 26-ին ընդունված «Չափումների միասնականության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով, ՇՎՏՄ-ին վերապահվել է նաև ստուգումներ իրականացնել ծառայությունների մատուցման ոլորտում: Այս լրացման արդյունքում ՇՎՏՄ-ն չափագիտական կանոնների և նորմերի ստուգումներ է իրականացրել բանկերում, գրավատներում, փոստային կապի, հանրային սննդի բնագավառներում և գրեթե բոլոր տնտեսվարողների մոտ

(98%) հայտնաբերվել են չստուգաչափված չափման միջոցեր և ենթարկվել ստուգաչափման:

- Չափագիտական կանոնների և նորմերի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով ձեռք է բերվել ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի չափանոթներ, բարձր ճնշման բնական գազի բալոններ և համապատասխան կշեռքներ, հեղուկացված ածխաջրածնային գազերի փորձանմուշ վերցնելու, ինչպես նաև քաշը որոշող համապատասխան սարքեր:

ՇՎՏՄ-ի նյութական պահուստի ոլորտի մասով ունեցած ձեռքբերումներն են՝

- իրականացված ստուգումների արդյունքում նվազել են կուտակման ենթակա ռազմավարական պահուստի՝ նավթամթերքի ծավալները չապահովող տնտեսվարող սուբյեկտները՝ 2021 թվականի 33%-ից նվազելով 14%:

ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

5. ՇՎՏՄ-ի վերահսկողության ոլորտների ընդհանուր վիճակը

ՇՎՏՄ-ի կողմից 2022 թվականի ինը ամսվա ընթացքում տնտեսվարող սուբյեկտի մոտ փաստացի իրականացված ստուգումների և բացահայտված խախտումների քանակային պատկերը հետևյալն է՝

N	Ստուգման հիմքը	Քանակը		
		ակտ	**տեղեկանք**	**ընդամենը**
1.	ծրագրով նախատեսված	357 (81%)	83 (19%)	440
2.	դիմում-բողոքի հիման վրա	5 (55%)	4 (45%)	9
3.	Այլ պետական մարմինների գրությունների հիման վրա	18 (53%)	16 (47%)	34
ԸՆԴԱՄԵՆԸ		**380 (79%)**	**103 (21%)**	**483**

ՇՎՏՄ-ի կողմից 2022 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված և փաստացի իրականացված ստուգումների քանակային պատկերը հետևյալն է՝

Եռամսյակներ	Նախատեսված	Իրականացված
1-ին եռամսյակ	**130**	**126 (97%)**
2-րդ եռամսյակ	**187**	**169 (90%)**
3-րդ եռամսյակ	**157**	**145 (92%)**
4-րդ եռամսյակ	**118**	**-**
ԸՆԴԱՄԵՆԸ	**592**	**440 (ինը ամիս)**

Տնտեսվարող սուբյեկտների մոտ ծրագրով նախատեսված ստուգումների քանակը փաստացի իրականացված ստուգումների քանակից քիչ է, քանի որ թվով 4 տնտեսվարող սուբյեկտներ գործունեությունը դադարացրել են, 22-ը՝ ժամանակավոր դադարեցրել, 1-ը՝ ստուգումը խոչընդոտել, իսկ 7-ը՝ այլ պատճառներով:

Ստորև ներկայացվում է ՇՎՏՄ-ի վերահսկողության ոլորտների ընդհանուր վիճակը.

N	Ոլորտի անվանումը	Խախտումները ըստ ստուգաթերթի		
		կիրառ-վել է	խախտում է արձա-նագրվել	խախտման տեսակարար կշիռը (%)
1.	Թեթև արդյունաբերություն	47	29	62
2.	Բետոնի ամրանավորման համար օգտագործվող պողպատե արտադրանք	10	9	90
3.	Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք	78	45	58
4.	Ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք	67	28	42
5.	Չափումների միասնականության ապահովում	361	283	78
6.	Սինթետիկ հիմքով լաքեր և ներկեր	14	8	57
7.	Տեխնիկական միջոցների էլեկտրամագնիսական համատեղելիություն	55	33	60
8.	Ավտոգազալիցքավորման ճնշակայաններ (ԱԳԼՃԿ)	44	12	27

9.	Ցեմենտ	4	1	25
10.	Ցածրավոլտ սարքավորումներ	71	40	56
11.	Խաղալիքներ	67	43	64
12.	Քսանյութեր, յուղերին և հատուկ հեղուկներ	14	7	50
13.	Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ	48	18	38
14.	Օծանելիքակոսմետիկական արտադրանք	67	24	36
15.	Խեցեգործական ամանեղեն	21	1	5
16.	Լվացող և մաքրող միջոցներ	45	17	38
17.	Ռադիոսարքավորումներ	3	2	67
18.	Ծխախոտային արտադրանք	20	0	0
19.	Ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչներ	23	0	0
20.	Փաթեթվածքի անվտանգություն	25	2	8
21.	Հեղուկացված ածխաջրածնային գազեր	50	16	32

ՇՎՏՄ-ի կողմից 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված ստուգումների քանակային պատկերը հետևյալն է՝

Եռամսյակներ	**Նախատեսված**
1-ին եռամսյակ	140 (24.4%)
2-րդ եռամսյակ	165 (28.8%)
3-րդ եռամսյակ	145 (25.3%)
4-րդ եռամսյակ	123 (21.5%)
ԸՆԴԱՄԵՆԸ	**573**

ՇՎՏՄ-ն հաշվի առնելով 2022 թվականին իրականացված ստուգումների արդյունքները՝ 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով թիրախավորել է հետևյալ ոլորտները՝

- Խաղալիքներ,

- Ավտոգազալիցքավորման ճնշակայաններ,
- Չափումների միասնականություն,
- Ավտոմոբիլային բենզին և դիզելային վառելիք,
- Հեղուկացված ածխաջրածնային գազեր,
- Օծանելիք և կոսմետիկ արտադրանք,
- Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանք:

5.1. Տեխնիկական կանոնակարգման ոլորտ

5.1.1. Տեխնիկական կանոնակարգման ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Տեխնիկական կանոնակարգման ոլորտում առկա հիմնական խնդիրն է՝ ապահովել անվտանգ ոչ պարենային արտադրանքների առկայությունը շուկայում:

Այս խնդրի ապահովման հետ կապված ՇՎՏՄ-ի կողմից բացահայտված ռիսկերն են՝

- առանց համապատասխանության գնահատման փաստաթղթերի ուղեկցման ոչ պարենային արտադրանքների շուկայահանումը,
- առանց մակնշման ոչ պարենային արտադրանքների շուկայահանումը,
- տեխնիկական կանոնակարգերով սահմանված անվտանգության ցուցանիշներին չհամապատասխանող ոչ պարենային արտադրանքների շուկայահանումը:

5.1.2. Տեխնիկական կանոնակարգման ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Տեխնիկական կանոնակարգման ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ն կիրառել է իր վերահսկողական, ինչպես նաև իրազեկման և խորհրդատվական գործառույթների ողջ գործիքակազմը: Մասնավորապես՝ 2022 թվականի 9 ամիսների ընթացքում իրականացված թվով 483 ստուգումների ընթացքում կիրառել է տեխնիկական կանոնակարգման ոլորտի 773 ստուգաթերթ, որոնցից 335-ով (43%) արձանագրվել է խախտում: Արձանագրված խախտումների վերացման արդյունքում օրենքով սահմանված կարգով տնտեսվարող սուբյեկտները դիմել և ձեռք են բերել համապատասխանության գնահատման թվով 131 փաստաթուղթ:

Տեխնիկական կանոնակարգման ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ի նախաձեռնությամբ սկսվել է նավթամթերքի լաբորատորիայի հավատարմագրման գործընթացը: Հավատարմագրումը կնպաստի այդ ոլորտի անվտանգության ցուցանիշների արագ բացահայտմանը:

5.2. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի ոլորտ

5.2.1. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում առկա հիմնական խնդիրն է՝ ապահովել հարգադրոշմին համապատասխանող թանկարժեք մետաղից պատրաստված իրերի առկայությունը շուկայում:

Այս խնդրի ապահովման հետ կապված ՇՎՏՄ-ի կողմից բացահայտված ռիսկերն են՝

- ՀՀ-ում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման ծանուցման ենթակա գործունեություն իրականացնող հաշվառված անձանց կողմից թանկարժեք մետաղներից պատրաստված իրի իրական հարգից ավելի բարձր հարգ դրոշմելը,
- ՀՀ-ում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառք իրականացնող անձանց կողմից թանկարժեք մետաղից պատրաստված իրին կցված պիտակի վրա նշված տվյալների (հարգ, քաշ, թանկարժեք քարի նկարագիր) անհամապատասխանությունը այդ իրի տվյալների հետ:

5.2.2. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման, առուվաճառքի ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ի նախաձեռնությամբ սկսվել է թանկարժեք մետաղների լաբորատորիայի

հավատարմագրման գործընթացը, ինչը կնպաստի այս ոլորտում սպառողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը՝ վերջիններիս հնարավորինս զերծ պահել խաբեությունից: 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրի նախագծով նշված ոլորտում ստուգումներ չեն պլանավորվել, քանի որ նախատեսվում են իրականացվել ոլորտային ստուգումներ լաբորատորայի հավատարմագրումից հետո:

5.3. Չափումների միասնականության ապահովման ոլորտ

5.3.1. Չափումների միասնականության ապահովման ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Չափումների միասնականության ապահովման ոլորտում առկա խնդիրն է՝ պաշտպանել սպառողներին չափման միջոցների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից: Այս խնդրի ապահովման հետ կապված ՇՎՏՄ-ի կողմից բացահայտված ռիսկերն են՝

- չստուգաչափված (տեսակը չհաստատված) չափման միջոցների շահագործումը,
- չափման միջոցի միջստուգաչափման ժամկետի խախտումը,
- չափման միջոցի ցուցմունքի անհամապատասխանությունը չափագիտական կանոններով և նորմերով սահմանված պահանջներին:

5.3.2. Չափումների միասնականության ապահովման ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Չափումների միասնականության ապահովման ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ն կիրառել է իր վերահսկողական, ինչպես նաև իրազեկման և խորհրդատվական գործառույթների ողջ գործիքակազմը: Մասնավորապես՝ 2022 թվականի 9 ամիսների ընթացքում իրականացված թվով 483 ստուգումների ընթացքում կիրառել է չափումների միասնականության ապահովման ոլորտի 361 ստուգաթերթ, որոնցից 283-ով (78%) է արձանագրվել խախտում: Արձանագրված խախտումների վերացման արդյունքում օրենքով սահմանված կարգով տնտեսվարող սուբյեկտները դիմել և ստուգաչափել են թվով 2069 չափման միջոց:

Չափումների միասնականության ապահովման ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ն ձեռք է բերել ավտոմոբիլային բենզինի և դիզելային վառելիքի չափանոթներ, բարձր ճնշման բնական գազի բալոններ և համապատասխան կշեռքներ,

հեղուկացված ածխաջրածնային գազերի փորձանմուշ վերցնելու, ինչպես նաև քաշը որոշող համապատասխան սարքեր, որոնք արդեն իսկ ստուգաչափվել են: Այս չափման միջոցների կիրառման արդյունքում նվազել են դիմում-բողոքների արձագանքման, ինչպես նաև ստուգումների իրականացման ժամկետները:

5.4. Նյութական պահուստի ոլորտ

5.4.1. Նյութական պահուստի ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

ՇՎՏՄ-ին վերապահված իրավասությունների շրջանակներում նյութական պահուստի ոլորտի հիմնախնդիրն է վառելիքային պաշարների մատակարարման ժամանակավոր խափանումների ժամանակ ներքին շուկայում առաջարկի և պահանջարկի միջև անհամամասնության, ինչպես նաև տնտեսության կայունությանը խոչընդոտող այլ իրավիճակների առաջացման դեպքում ՀՀ-ում պարենային անվտանգության ապահովումը: Այս խնդրի ապահովման հետ կապված ՇՎՏՄ-ի կողմից բացահայտված ռիսկերն են՝

- տնտեսվարող սուբյեկտների կողմից կուտակման ենթակա նավթամթերքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված ծավալներով չամբարելը:

5.4.2. Նյութական պահուստի ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Նյութական պահուստի ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ն կիրառել է իր վերահսկողական, ինչպես նաև իրազեկման և խորհրդատվական գործառույթների ողջ գործիքակազմը:

Մասնավորապես՝ իրականացված ստուգումների արդյունքում նվազել են կուտակման ենթակա ռազմավարական պահուստի՝ նավթամթերքի ծավալները չապահովող տնտեսվարող սուբյեկտները՝ 2021 թվականի 33%-ից նվազելով 14%:

5.5. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտ

5.5.1. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում առկա խնդիրները և բացահայտված ռիսկերը

Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում ՇՎՏՄ-ն դեռևս վերահսկողություն չի իրականացրել, քանի որ այս ոլորտի նկատմամբ վերահսկողությունը ՀՀ կառավարության կողմից ՇՎՏՄ-ին է վերապահվել 2021 թվականի հուլիսի 15-ից՝ N 1157-Ա որոշմամբ և այս ոլորտի ստուգաթերթը ՀՀ կառավարության կողմից հաստատվել է 2022 թվականի նոյեմբերի 10-ին:

ՇՎՏՄ-ն գտնում է, որ այս ոլորտի հիմնական ռիսկը արտադրական կանեփ մշակաբույսում կաննաբիդիոլի (CBD) պարունակության չգերազանցումն է տետրահիդրոկաննաբինոլի (THC) պարունակությանը և նմուշառված զանգվածում տետրահիդրոկաննաբինոլի (THC) տոկոսային պարունակության գերազանցումը 0,3 տոկոսից:

5.5.2. Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում ռիսկերի նվազեցմանն ուղղված տարեկան միջոցառումներ

Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ն նախատեսում է իրականացնել պարբերաբար դիտարկումներ:

Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ոլորտում ռիսկերի նվազեցման նպատակով ՇՎՏՄ-ն միջոցներ է ձեռնարկել լաբորատոր սարքավորում ձեռբերելու ուղղությամբ և արդեն իսկ ստորագրվել է այդ սարքավորման ձեռքբերման պայմանագիրը: Լաբորատորայի հավատարմագրումից հետո կխնայվի ֆինանսական միջոցներ և ժամանակ:

6. Վերահսկողության ոլորտում առկա օրենսդրական խնդիրները, դրանց լուծմանն ուղղված գործողությունները

2022 թվականի սեպտեմբերի 14-ին առաջին ընթերցմամբ ԱԺ–ն ընդունել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին և «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին նախագծերը, որի մասնակից է հանդիսանում ՇՎՏՄ–ն: Խոսքը վերաբերում է գազալցակայաններում և բենզալցակայաններում ստուգումներին և պատասխանատվության մեխանիզմների փոփոխությանը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու անհրաժեշտությունն առաջացել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն օրենսգրքի առկա հոդվածները պատշաճ կերպով չեն կարգավորում հեղուկացված ածխաջրածնային գազի, բնական գազի, բենզինի ու դիզելային վառելիքի սպառողների և վերը նշված վառելիք իրացնողների միջև իրավահարաբերությունները:

Այս պահին թերլիցքավորման արդյունքում նշանակվող տուգանքը հաստատուն գումար է, որը անհամաչափ սանկցիա է նախատեսում՝ հաշվի առնելով տնտեսվարողների շրջանառության ծավալների տարբերությունները: Ներկայացված փոփոխությամբ տուգանքի չափերը կսահմանվեն ըստ տնտեսվարողների շրջանառության ծավալների տարբերությունների:

Ի լրումն վերոնշյալ փոփոխությունների՝ «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում նախագծով առաջարկվել է կատարել լրացումներ, ըստ որի՝ լցակայանների կողմից թերլցման դեպք հայտնաբերելու դեպքում չափումների միասնականության ապահովման ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմինը մեկ ամիս ժամկետով փակցելու է «Մենք տուգանվել ենք թերլիցքավորման համար» ցուցանակ:

Բացի այդ, օրենքի նախագծով տնտեսվարող սուբյեկտները պարտավոր են լինելու ունենալ չափագիտության բնագավառում իրենց մոտ իրականացված նախորդ ստուգումների ժամկետների, արդյունքների մասին տեղեկատվություն պարունակող QR կոդեր:

ՇՎՏՄ-ի նախաձեռնության արդյունքում 2022 թվականի հուլիսի 24-ին ուժի մեջ է մտել «Ավտոգազալցակայանների կառուցման և շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 21–ի N 1131-Ն որոշումը, որով էլ այժմ կարգավորվում են ավտոգազալցակայանների կառուցման և շահագործման հետ կապված հարցերը:

ՇՎՏՄ-ն նախատեսում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու առաջարկ ներկայացնել, որով հնարավորություն ընձեռնվի ստուգող մարմնի պաշտոնատար անձին տնտեսվարող սուբյեկտին բացահայտված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ հանձնարարականներ (կարգադրագրեր) արձակել ոչ թե ստուգման ակտի հիման վրա, այլ ստուգման ժամանակ խախտումների բացահայտման/արձանագրման հետ միաժամանակ: Քանի որ ներկայումս հանձնարարականներ (կարգադրագրեր) տրվում են ստուգման ակտի հիման վրա, դրա արդյունքում հայտնաբերված իրավախախտման պահից մինչև ստուգման ակտն ընկած ժամանակահատվածը հաճախ լինում են դեպքեր, երբ տնտեսվարողները տեխնիկական կանոնակարգերին չհամապատասխանող ապրանքը իրացնում են մինչև կարգադրագրի արձակումը: Նշված առաջարկի ընդունման արդյունքում կկարգավորվի առաջացած խնդիրը:

Հայաստանի Հանրապետությունում թանկարժեք մետաղների բնագավառում վերահսկողությունն առավել արդյունավետ դարձնելու նպատակով նախատեսվում է «Թանկարժեք մետաղների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու առաջարկներ ներկայացնել, որով հնարավորություն կընձեռնվի ՇՎՏՄ–ին՝ թանկարժեք մետաղների մանրածախ վաճառք իրականացնող տնտեսվարողի մոտ հարգադրոշման անհամապատասխանության դեպքում միաժամանակ պատասխանատվության միջոց կիրառել նաև այդ իրը հարգադրոշողի նկատմամբ:

Նախատեսվում է նաև նշված ոլորտում կատարված իրավախախտումների տուգանքի չափում փոփոխություն իրականացնել և ապահովել կատարված իրավախախտման և նշանակված տուգանքի համաչափությունը:

7. Կանխարգելիչ և իրազեկման միջոցառումների իրականացման նկարագրությունը

ՇՎՏՄ-ի ԻԽՀՀՏԱԲ-ն նույնականացնելով և գնահատելով 2022 թվականի ընթացքում հանրային հաղորդակցության իրականացման արդյունքները, ուժեղ և թույլ կողմերը, Ծրագրում ներառել է առավել հղկված և արդյունավետ հաղորդակցության գործիքներ, որոնք կրկին հիմնված են լինելու տնտեսվարողների և հանրության լայն շրջանակի իրական կարիքների վրա:

Մասնավորապես, ՇՎՏՄ-ի և վերջինիս գործունեության ճանաչելիության բարձրացմանն են միտված լինելու տնտեսվարողների և քաղաքացիների հետ տարբեր ձևաչափերով կազմակերպվող հանդիպում-քննարկումներն ու իրազեկման միջոցառումները, որոնց ընթացքում կողմերը հնարավորություն կունենան բարձրացնել իրենց հուզող հարցերի և խնդիրների շրջանակն ու ստանալ սպառիչ պատասխաններ: Այսպիսի հանդիպումների արդյունքում ՇՎՏՄ-ն և շահառու խմբերի միջև ձևավորվում է արդյունավետ աշխատանքային միջավայր, իսկ ծագած խնդիրների փոխանցումը տեղի է ունենում առաջնային օղակի միջոցով:

Ծրագրով նախատեսվում է միջգերատեսչական համագործակցության խորացում և ամրապնդում: Մասնավորապես, կշարունակվի Պետական եկամուտների կոմիտեի հետ համագործակցությունը և վերջինիս ծրագրային հնարավորությունների օգտագործմամբ ոչ պարենային ապրանքներ ներմուծող տնտեսվարողների իրազեկման համակարգի կատարելագործումը: Նոր՝ երկկողմ հուշագրերի ձևաչափով կշարունակվի համագործակցությունը ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների, հաշվապահական ասոցիացիաների և շահառու այլ խմբերի հետ: Նպատակը ՇՎՏՄ-ի գործունեության թափանցիկության ապահովումն ու մասնավոր հատվածի կարիքների առավել իրական պատկերն ունենալն է:

Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ համագործակցությունը կշարունակվի տարբեր գործիքների կիրառմամբ՝ հարցազրույցների, թեմատիկ քննարկումներ, անհրաժեշտության դեպքում՝ մամուլի ասուլիսներ և այլն: Որպես տեեկատվության փոխանցման առաջնային դերակատար,

առավելապես հանդես կգա ՇՎՏՄ-ի ղեկավարը՝ փոխանցվող տեղեկատվության նկատմամբ հանրային վստահության ամրապնդման նպատակով:

Ամենօրյա ռեժիմով կշարունակվի ՇՎՏՄ-ի գործունեությանն առնչվող մեդիա կոնտենտի հավաքագրումն ու վերլուծությունը, նույնականացված խնդիրների քննարկումն ու դրանց լուծման գործնական ուղիների մշակումը:

Իրազեկման թերթիկների կամ առցանց գործիքների միջոցով հնարավորինս մեծ թվով տնտեսվարողներ կիրազեկվեն իրենց գործունեության ոլորտներին առնչվող նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների, դրանցում լրացումներ կատարելու մասին՝ իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ առավել իրազեկ ու տեղեկացված լինելու, ՇՎՏՄ-ին որպես գործընկեր, այլ ոչ թե «տուգանող մարմին» դիտարկելու նպատակով:

Կշարունակվի ՇՎՏՄ-ի պաշտոնական կայք էջի և ֆեյսբուքյան էջի բովանդակային ու տեղեկատվական սպասարկումն ու կատարելագործումը՝ հաշվի առնելով նախորդ տարվա փորձն ու կիրառելով սոցիալական հարթակների ընձեռած տեխնիկական նոր հնարավորությունները: ՇՎՏՄ-ի պաշտոնական կայք էջում կհրապարակվեն նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններն ու լրացումները, ՇՎՏՄ-ի գործունեությանն առնչվող նյութերը, հաշվետվությունները, Խորհրդի ընդունած որոշումներն ու պաշտոնական այլ տեղեկատվություն: Հանրության հետ կապը կիրականացվի առավելագույնս թափանցիկ և ճիշտ ժամանակին:

ԻԽՀՀՏԱԲ-ն օրենքով սահմանված կարգով և ժամկետներում կիրականացնի ՇՎՏՄ-ի թեժ գծով ստացված զանգերի, բողոքների և ՇՎՏՄ-ին հասցեագրված դիմում-բողոքների վիճակագրության վարում, ամսական ամփոփում, հաշվետվությունների և խորհրդատվական նյութերի պատրաստում: Իրավիճակի համեմատական վերլուծության միջոցով հնարավոր կլինի մշակել, վեր հանել և ցուցակագրել ամբողջ տարվա ընթացքում ծագած խնդիրները, գնահատել հանրության հետ տարվող աշխատանքների արդյունավետության աստիճանը:

8. Այլ նյութեր

Առավել ռիսկային ոլորտները և տնտեսվարող սուբյեկտները բացահայտելու, նպատակով ՇՎՏՄ-ն տեղեկատվություն է հավաքագրել պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից, քաղաքացիներից և այլ աղբյուրներից: Մասնավորապես՝

1. Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, առողջապահության և արտակարգ իրավիճակների, էկոնոմիկայի, նախարարություններից,
2. ՀՀ կենտրոնական բանկից,
3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեից,
4. <<Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին>> ՓԲԸ-ից,
5. Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված տվյալներից,
6. Հայաստանի Հանրապետությունում գործող բենզալցակայաններում, հեղուկացված ածխաջրածնային գազի լիցքավորման կայաններում և ԱԳԼՃԿ-ներում իրականացված իրազեկման աշխատանքների արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունից,
7. Ստացված դիմում-բողոքներից և հեռախոսազանգից,
8. ԶԼՄ-ներից և համացանցից:

ՀՀ կառավարությանն ենթակա պետական եկամուտների կոմիտեի հետ իրականացված բանակցությունների արդյունքում ՇՎՏՄ-ին ընձեռնվել է հնարավորություն իրական ռեժիմով տեղեկատվություն ստանալ ՇՎՏՄ-ի կողմից վերահսկման ենթակա ՀՀ տարածք ներմուծված ոչ պարենային արտադրանքների վերաբերյալ:

Հավելված 1

Խորհրդի 2022 թվականի
նոյեմբերի _____-ի
N _____ որոշման

ԺԱՄԱՆԱԿՑՈՒՅՑ
ՀՀ ՇՎՏՄ-ի վերահսկողության ոլորտներում 2023 թվականի խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Նպատակը և ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակա-տարողը	Ժամկետը
	1	2	3	**4**	**5**
1.	Ոչ պարենային արտադրանքների տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում	Ապահովել շուկայահանված տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող ոչ պարենային արտադրանքների համապատասխանությունը տեխնիկական կանոնակարգերով սահմանված պահանջներին	ՏԿԹՄՎՎ	ՉԿՆՎՎ ՆԼՓՉ	տարվա ընթացքում
2.	Չափագիտական կանոնների և նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում	Պաշտպանել սպառողներին չափման միջոցների ոչ հավաստի արդյունքների բացասական հետևանքներից	ՉԿՆՎՎ	ՏԿԹՄՎՎ ՆԼՓՉ	տարվա ընթացքում
3.	Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման ծանուցման ենթակա, ինչպես նաև առք ու վաճառքի գործունեություն իրականացնող հաշվառված անձանց նկատմամբ վերահսկողության իրականացում	Պաշտպանել սպառողների իրավունքները և օրինական շահերը՝ նվազեցնելով թանկարժեք մետաղներից պատրաստված իրի իրական հարգից ավելի բարձր հարգ դրոշմված իևերի առկայությունը շուկայում	ՏԿԹՄՎՎ	ՉԿՆՎՎ ՆԼՓՉ	տարվա ընթացքում
4.	Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության նկատմամբ դիտարկումների իրականացում	Արտադրական կանեփի արտադրության, ինչպես նաև արտահանման, ներմուծման կամ մեծածախ առևտրի օրինական շրջանառության ապահովում:	ԱԿՎՎ	ՉԿՆՎՎ ՆԼՓՉ	տարվա ընթացքում
5.	Նյութական պահուստի օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացում	Վառելիքային պաշարների մատակարարման ժամանակավոր խափանումների ժամանակ ներքին շուկայում առաջարկի և պահանջարկի միջև անհամամասնության, ինչպես նաև տնտեսության կայունությանը խոչընդոտող այլ իրավիճակների առաջացման դեպքում անվտանգության ապահովում	ՏԿԹՄՎՎ	ՉԿՆՎՎ	I կիսամյակ II կիսամյակ
6.	ՇՎՏՄ-ի վերահսկողական ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտների	Առավել ռիսկային տնտեսվարող սուբյեկտների և ոլորտների	ՌԳՎՎ	ՏԿԹՄՎՎ ՉԿՆՎՎ	Տարվա ընթացքում

	վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և վերլուծություն	բացահայտում, առաջացած ռիսկերի կառավարում		ԱԿՎՎ ՆԼՓՉ	
7.	Համագործակցել ԵԱՏՄ, ԵՄ և այլ միջազգային կառույցների, ինչպես նաև այլ մասնագիտացված շահագրգիռ մարմինների հետ	Անձնակազմի կարողությունների զարգացում, աշխատանքային ունակությունների կատարելագործում	կառուց-վածքային բոլոր ստորաբա-ժանումներ	-	Տարվա ընթացքում

Հավելված 2
Խորհրդի 2022 թվականի
նոյեմբերի _____-ի
N _____ որոշման

Միջոցառումներ
ՀՀ ՇՎՏՄ-ի 2023 թվականի կանխարգելիչ և իրազեկման

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Նպատակը և ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համա-կատարողը	Ժամկետը
1.	Հանրային իրազեկման գործիքակազմի հղկում և աշխատանքների համակարգում	ՇՎՏՄ-ի և վերջինիս գործունեության ճանաչելիության բարձրացում հանրության շրջանում	ԻԽՀՀՏԱԲ	-	Տարվա ընթացքում
2.	Միջգերատեսչական համագործակցության շրջանակում Պետական եկամուտների կոմիտեի ծրագրային հնարավորությունների օգտագործմամբ ոչ պարենային ապրանքներ ներմուծող տնտեսվարողների իրազեկում	Ոչ պարենային արտադրանքների ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարողների իրավագիտակցության բարձրացում	կառուց-վածքային բոլոր ստորաբա-ժանումներ	-	Յուրաքանչյուր եռամսյակ 1 իրազեկում
3.	Տնտեսվարող սուբյեկտների գործունեությանն առնչվող նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունների, դրանցում լրացումներ կատարելուն մասին հանրայնացում՝ ՇՎՏՄ-ի պաշտոնական կայք էջի միջոցով	Տնտեսվարողների կողմից իրենց իրավունքների և պարտականությունների պատշաճ իմացություն	ԻԽՀՀՏԱԲ	ԻԱՓՎ	Ըստ անհրաժեշտության
4.	Քաղաքացիների ընդունելություն	Հանրության հնարավորինս լայն շրջանակի իրազեկում և ընդհանուր տեղեկացվածության բարձրացում	ԻԽՀՀՏԱԲ	կառուց-վածքային բոլոր ստորաբա-ժանումներ	Յուրաքանչյուր ամսվա վերջին ուրբաթ օրը
5.	Անհատական իրազեկում-հանդիպումներ առավել խոշոր ներկրող կամ արտադրող ընկերությունների ներկայացուցիչների հետ	Տնտեսվարողներին իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ տեղեկատվության փոխանցում	ԻԽՀՀՏԱԲ	կառուց-վածքային բոլոր ստորաբա-ժանումներ	Տարվա ընթացքում
6.	ՇՎՏՄ-ի վերահսկողության ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարողների հետ մարզային իրազեկում-հանդիպումների կազմակերպում և անցկացում	Օրենսդրական և ենթաօրենսդրական փոփոխությունների, վերահսկողության նոր մեխանիզմների և տեխնիկական կանոնակարգի պահանջների վերաբերյալ տնտեսվարողների իրազեկում	ԻԽՀՀՏԱԲ	կառուց-վածքային բոլոր ստորաբա-ժանումներ	Յուրաքանչյուր եռամսյակ 2-3 այցելություն
7.	Հանդիպումների կազմակերպում հասարակական կազմակերպությունների,ոլորտում գործող հաշվապահական	Համագործակցության ամրապնդում, ՇՎՏՄ-ի գործունեության թափանցիկության և	ԻԽՀՀՏԱԲ	-	Տարվա ընթացքում

	ասոցիացիաների և այլ շահառու խմբերի հետ	հետադարձ կապի ապահովում			
8.	ՁԼՄ-երի ներկայացուցիչների հետ մշտական համագործակցություն և տեղեկատվության փոխանցում, հարցազրույցների և տարբեր քննարկումների կազմակերպում	ՇՎՏՄ-ի գործունեության վերաբերյալ հանրության տեղեկացվածության բարձրացում	ԻԽՀՀՏԱԲ	-	Տարվա ընթացքում
9.	ՇՎՏՄ-ի ղեկավար կազմի մասնակցությամբ հարցազրույցների կազմակերպում և անցկացում	Հասարակության շրջանում ՇՎՏՄ-ի գործունեության լուսաբանում	ԻԽՀՀՏԱԲ	-	Տարվա ընթացքում
10.	Տնտեսվարողների իրազեկում՝ իրազեկման թերթիկների և առցանց գործիքների միջոցով	Տնտեսվարողների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացում	ԻԽՀՀՏԱԲ	կառուց-վածքային բոլոր ստորաբա-ժանումներ	Տարվա ընթացքում
11.	ՇՎՏՄ-ի գործունեությանն առնչվող մեդիա նյութերի հավաքագրում և վերլուծություն	Հանրային կարծիքի և ՁԼՄ-երի արձագանքների մոնիթորինգ, արդյունքում՝ ՇՎՏՄ-ի գործունեության առավել թիրախայնություն և արդյունքների բարելավում	ԻԽՀՀՏԱԲ	-	Տարվա ընթացքում
12.	ՇՎՏՄ-ի պաշտոնական կայք էջի և ֆեյսբուքյան էջի բովանդակային ու տեղեկատվական սպասարկում, կատարելագործում	Հանրության հնարավորինս լայն շրջանակի տեղեկացվածության ապահովում, թափանցիկության և իրազեկվածության բարձրացում	ԻԽՀՀՏԱԲ	-	Տարվա ընթացքում
13.	ՇՎՏՄ-ի թեժ գծով ստացված զանգերի և բողոքների վիճակագրության վարում, ամսական ամփոփում, հաշվետվությունների և խորհրդատվական նյութերին պատրաստում	Իրավիճակի համեմատական վերլուծության միջոցով առկա խնդիրների վեր հանում և ցուցակագրում	ԻԽՀՀՏԱԲ	-	Յուրաքանչյուր նախորդ ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 5-րդ աշխաքանքային օրը
14.	ՇՎՏՄ-ին հասցեագրված դիմում-բողոքների վիճակագրության վարում, ամսական ամփոփում, հաշվետվությունների և խորհրդատվական նյութերին պատրաստում	Իրավիճակի համեմատական վերլուծության միջոցով առկա խնդիրների վեր հանում և ցուցակագրում	ԻԽՀՀՏԱԲ	-	Յուրաքանչյուր նախորդ ամսվա համար՝ մինչև հաջորդ ամսվա 5-րդ աշխաքանքային օրը